Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունվարի 10-ի N 100 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի միջոցով անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների մասին տեղեկատվության տրամադրման ընթացակարգը:

2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 9-13-րդ, 15-23-րդ և 25-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը դիմողին տրամադրվում է փոստով՝ պատվիրված նամակով, եթե դիմումատուն դիմումի հետ միասին (այդ թվում՝ փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով) ներկայացրել է տեղեկատվությունն ստանալու նպատակով փոստային կապի ծառայության մատուցման համար վճարումը հավաստող անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգով վճարումը հավաստող 20-նիշանոց ծածկագիրը և վճարման ամսաթիվը:

3. Դիմումի մեջ դիմողի էլեկտրոնային հասցեն նշված լինելու դեպքում՝ տեղեկատվության տրամադրման մերժման կամ կասեցման վերաբերյալ գրությունն առաքվում է նաև էլեկտրոնային կապի միջոցով:

4. Դիմումատուի կողմից տեղեկատվությունն ստանալու նպատակով փոստային կապի ծառայության մատուցման համար վճարումը հավաստող անդորրագիրը չներկայացվելու կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգով վճարումը հավաստող 20-նիշանոց

ծածկագիրը և վճարման ամսաթիվը չնշվելու դեպքում տեղեկատվությունը դիմողին փոստով չի առաքվում:

5. Փոստային կապի միջոցով տեղեկատվությունն ստանալու նպատակով փոստային կապի ծառայության մատուցման համար վճարումը կատարվում է դիմողի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի արտաբյուջետային գանձապետական հաշվին, Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի ծառայությունների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հաստատված սակագներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ